

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

/լոգո/

Միանանք, շենանանք

Հաճախ տրվող հարցեր

Հայաստանի համայնքներում վարչատարածքային բարեփոխումների վերաբերյալ

1. Ինչո՞ւ է պետք խոշորացնել համայնքները:

Ներկայիս տեղական ինքնակառավարման համակարգում բազմաթիվ փոքր համայնքների գոյությունը խոչընդոտում է արդյունավետ կառավարմանը, սահմանափակ ֆինանսական միջոցների նպատակային օգտագործմանը և համայնքների կարողությունների ամրապնդմանը:

Վերոնշյալ խնդիրներին պատշաճ լուծում տալու համար ՀՀ կառավարությունը որոշում է կայացրել վարչատարածքային բարեփոխումների միջոցով բարելավել տեղական ինքնակառավարման համակարգը՝ խոշորացնելով համայնքները:

2. Որո՞նք են համայնքների խոշորացման հիմքերը:

Վարչատարածքային բարեփոխումների համար հիմք է ծառայում արդյունավետ կառավարման անցնելու հեռանկարը, ըստ որի այն նպաստելու է.

- տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների ու ծառայությունների ամբողջ ցանկով առավել արդյունավետ և մատչելի իրականացմանը,
- համայնքի սոցիալ-տնտեսական կայուն զարգացմանը,
- մարդկային և ֆինանսական ռեսուրսների ձևավորմանն ու զարգացմանը,
- անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծմանը և դրանց արդյունավետ գործունեության ապահովմանը:

3. Ո՞րն է լինելու քաղաքացիների շահը խոշորացման արդյունքում: Ի՞նչ կստանանք մենք՝ քաղաքացիներս, խոշորացումից:

Խոշորացման արդյունքում քաղաքացին կարող է ակնկալել՝

- որակյալ համայնքային ծառայությունների մատուցում,
- որոշումների համատեղ կայացում,
- ենթակառուցվածքների զարգացում,
- մասնակցայնություն, թափանցիկություն և հաշվետվողականություն,
- ներդրումային ծրագրերի իրականացում:

4. Ինչպե՞ս է տնօրինվելու համայնքային բյուջեն:

Համայնքային բյուջեն տնօրինվելու է համայնքապետարանի կողմից՝ հաշվի առնելով ինչպես ամբողջ համայնքի, այնպես էլ յուրաքանչյուր բնակավայրի կարիքները:

5. Խոշորացված բնակավայրերի համար ինչպիսի՞ զարգացման ծրագրեր են նախատեսվում:

Նոր ձևավորված համայնքն իր մեջ ներառում է մի քանի բնակավայր: Ներդրումային ծրագրեր իրականացվելու են բոլոր բնակավայրերում՝ ելնելով տվյալ համայնքի կարիքներից և հիմնականում ուղղված ենթակառուցվածքների զարգացմանը: Ծրագրերը որոշվելու են համայնքում և առանձին բնակավայրերում բնակչության հետ անցկացված քննարկումների հիման վրա՝ ելնելով համայնքի կամ բնակավայրի բնակչության առաջնահերթ կարիքներից:

6. Ինչպիսի՞ն է լինելու խոշորացված համայնքների կառավարման համակարգը:

Նոր համայնքն ունենալու է մեկ միասնական համայնքի ղեկավար, ավագանի և աշխատակազմ: Համայնքի ղեկավարը և ավագանին ձևավորվելու են ընդհանուր ընտրությունների արդյունքում:

Համայնքի յուրաքանչյուր բնակավայրում, բացառությամբ համայնքի կենտրոն հանդիսացող բնակավայրի, օրենքով նախատեսվում է մեկ վարչական ներկայացուցիչ, որը նշանակովի պաշտոն է և ունենալու է օրենքով սահմանված լիազորություններ:

7. Վարչական ներկայացուցիչը՝

- տվյալ բնակավայրի բնակիչ է,
- նշանակվում է համայնքի ղեկավարի կողմից,
- գործում է համայնքի ղեկավարի անունից,
- իրավասու է համայնքի ավագանու նիստերին հարցեր ներկայացնելու:

8. Համայնքային ավագանու քանի՞ անդամ է ընտրվելու յուրաքանչյուր գյուղից:

Ներկա պահին համայնքի ավագանու ընտրությունների վերաբերյալ օրենսդրական փոփոխություններ չկան. ավագանու տեղերը սահմանվում են ըստ համայնքի ընտրողների թվաքանակի: Բնակավայրերն իրենց «անվամբ» առանձին ավագանու անդամներ չեն ունենալու, սակայն փոքր գյուղի բնակիչները, համախմբվելով մեկ կամ երկու համագյուղացի թեկնածուների շուրջ, կարող են համայնքի ավագանու կազմում ունենալ իրենց ներկայացուցիչը:

9. Համայնքապետարանի աշխատակազմում քանի՞ աշխատակից է լինելու:

Համայնքի աշխատակազմի թվաքանակը սահմանում է համայնքի ավագանին համայնքի ղեկավարի ներկայացմամբ:

10. Ո՞վ է քաղաքացիներին անհրաժեշտ տեղեկանք տրամադրելու:

Վարչատարածքային բարեփոխումների շրջանակում յուրաքանչյուր բնակավայրում ներդրվում է Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ (ՀԿՏՀ), որն ապահովում է վարչական ծառայությունների մատուցում բնակիչներին անմիջապես բնակավայրերում (այդ թվում՝ առցանց): Համակարգը թույլ է տալիս ապահովել տեղեկատվական հոսքերի ավտոմատացված կառավարում համայնքապետարանում, ինչի շնորհիվ վարչական ներկայացուցիչը կարող է տրամադրել անհրաժեշտ տեղեկանքները:

Վարչական ներկայացուցիչը ունենալու է նաև բնակավայրի անվամբ կնիք (առանց ՀՀ զինանշանի), որը նույնպես կարող է ծառայել տեղեկանքներ տրամադրելու համար:

11. Ինչո՞ւ և ինչպե՞ս են քաղաքացիները խոշորացված համայնքի կենտրոն հասնելու անհրաժեշտ ծառայությունների համար:

Որոշ ծառայությունների համար քաղաքացիները որևէ տեղ գնալու անհրաժեշտություն չեն ունենա, մասնավորապես այն ծառայությունների համար, որոնք առկա են և գործում են բնակավայրում: Իսկ որոշ ծառայությունների հասանելիության խնդիրները (օրինակ՝ տրանսպորտային միջոց համայնքի կենտրոն հանդիսացող բնակավայր հասնելու համար) կարող են քննարկվել համայնքի զարգացման ծրագրերի շրջանակներում:

12. Ի՞նչ ծառայություններ են մատուցվելու, և ի՞նչ ենթակառուցվածքներ են ավելանալու:

Բնակավայրերում բոլոր ներկայիս ծառայությունները շարունակելու են մատուցվել: Բոլոր առկա և գործող կառույցները շարունակելու են գործել: Բարելավվելու կամ ավելանալու են այն ծառայությունները կամ ենթակառուցվածքները, որոնք անհրաժեշտ և նպատակահարմար կլինեն տվյալ համայնքում: